

ՀՀ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ  
ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

# ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ

Թիվ 2 (80)  
2018 թ.

Գլխավոր խմբագիր՝  
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,  
ի.գ.դ., պրոֆ. Գագիկ Ղազինյան

Խ մ ք ա գ ր ա կ ա ն խ ո ղ Ի ո լ ր ղ

Սամվել Դիլբանդյան - ի.գ.դ.

Գլխավոր խմբագրի տեղակալ

Կարեն Գևորգյան - ի.գ.թ

Գլխավոր խմբագրի տեղակալ

Աշոտ Պետրոսյան -

պատասխանատու քարտուղար

Գևորգ Դանիելյան - ի.գ.դ.

Հարություն Խաչիկյան - ի.գ.դ.

Արմեն Հայկյանց - ի.գ.դ.

Ղավիթ Ավետիսյան - ի.գ.թ.

Արթուր Վաղարշյան - ի.գ.դ.

Սերգեյ Առաքելյան - ի.գ.դ.

Վահե Հովհաննիսյան - ի.գ.դ.

Տարոն Սիմոնյան - ի.գ.թ.

Հիմնադիր և հրատարակիչ՝  
ՀՀ իրավաբանների միություն,  
ԵՊՀ իրավագիտության  
ֆակուլտետ

Խմբագրության հասցեն՝

ՀՀ, 0025 Երևան,

Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ

իրավագիտության ֆակուլտետ:

Հեռ. 060-71-02-47

Էլ. կայք՝

[http://ysu.am/faculties/hy/Law/  
section/structure/amb/48439](http://ysu.am/faculties/hy/Law/section/structure/amb/48439)

Խմբագրությունը կարող է

հրապարակել նյութեր՝ համամիտ

չլինելով հեղինակների

տեսակետների:

12 համակարգչային էջից ավելի

չպատվիրված նյութերը չեն

ընդունվում:

e-mail: [a\\_petrosyan@ysu.am](mailto:a_petrosyan@ysu.am)

Ղախիչ՝ 77771

Տպագրական 13.5 մամուլ

Գրանցման թիվը՝ 798

Տպաքանակը՝ 500

Գինը՝ պայմանագրային

Հանձնված է շարվածքի

24.06.2018

Հանձնված է տպագրության

5.09.2018

---

С О Ю З Ю Р И С Т О В Р А  
Ю Р И Д И Ч Е С К И Й Ф А К У Л Ъ Т Е Т Е Г У

# ГОСУДАРСТВО И ПРАВО

Номер 2 (80)  
2018 г.

Главный редактор:  
академик НАН РА,  
д.ю.н., проф. Гагик Казинян

Учредитель и издатель:  
Союз Юристов РА,  
Юридический факультет ЕГУ

## Р е д а к ц и о н н ы й с о в е т

Самвел Дилбандян - д.ю.н.

зам. главного редактора

Карен Геворгян - к.ю.н.

зам. главного редактора

Ашот Петросян -

ответственный секретарь

Геворг Даниелян - д.ю.н.

Арутюн Хачикян - д.ю.н.

Армен Айкянц - д.ю.н.

Давид Аветисян - к.ю.н.

Артур Вагаршян - д.ю.н.

Сергей Аракелян - д.ю.н.

Ваге Оганнесян - д.ю.н.

Тарон Симонян - к.ю.н.

Адрес редакции:  
РА, 0025 Ереван,  
ул. Алека Манукяна 1,  
юридический факультет ЕГУ.  
Тел.: 060-71-02-47  
e-mail: [a\\_petrosyan@ysu.am](mailto:a_petrosyan@ysu.am)  
web: [http://ysu.am/faculties/hy/Law/  
section/structure/amb/48439](http://ysu.am/faculties/hy/Law/section/structure/amb/48439)

13.5 усл. печ. л.

Тираж: 500

Сдано в набор 24.06.2018

Подписано к печати 5.09.2018

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### *Քաղաքացիական իրավունք և դատավարություն*

Գրիգոր Բեքմեզյան

ՕՐԵՆՔ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ..... 5

Վահագն Գրիգորյան

ԳԱՂՏՆԻ ԵՂԱՆԱԿՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԻ, ՏԵՍԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ..... 12

Աշխեն Սողոմոնյան

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԼՈՒԾԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԸ ..... 23

Նաիրա Ավետիսյան

ԱՆՁԻՆ ԱՆԳՐԾՈՒՄԵՆԱԿ ՃԱՆԱՁԵԼՈՒ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՈՐՈՇ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԱԴՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ..... 31

Ռուբինա Պետրոսյան

ԱՐԱՆՑ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՄՆԱՑԱԾ ԵՐԵՄԱՅԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱԿԻՃԱԿԻ ԲՆՈՒԹԱԳՐԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐՆ ԸՍՏ ՀՀ ՕՐԵՆՍԱԴՐՈՒԹՅԱՆ ..... 40

Դավիթ Օհանյան

ԿԱՄՔԸ ԵՎ ԿԱՄԱՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ ..... 54

### *Քրեական իրավունք և դատավարություն*

Սամվել Դիլբանդյան

ԱՆՁԱՓԱՀԱՍԻՆ ՎԵՐԱԳՐՎՈՂ ՀԱՆՑԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՈՒՅԹԻ ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՎԱՐՏՄԱՆ ՓՈՒԼՈՒՄ ..... 63

Արտակ Ղազարյան

«ՄԱՍՆԱՎՈՐ ՄԵՂԱԴՐԱՆՔԻ ԳՈՐԾԵՐԻ» ԵՎ ՏՈՒԺՈՂԻ ՀԵՏ ՀԱՇՏՎԵԼՈՒ ՀԻՄՔՈՎ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՆԱՆԱՏԿՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ..... 73

Геворг Израелян

ПРЕДУПРЕЖДЕНИЕ ПРОСТИТУЦИИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ: ПРАВОВЫЕ ОСНОВЫ И ОРГАНИЗАЦИОННЫЕ ПРОБЛЕМЫ ..... 86

Լալա Գրիգորյան

ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՏԱՐԻՔԻ ԶՀԱՍԱԾ ԿԱՍ  
ԱՆՄԵՂՍՈՒՄԻՆԱԿՈՒԹՅԱՆ ԿԻՃԱԿՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՁԻՆ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ  
ՄԻՋՈՑՈՎ ՀԱՆՑԱՆՔ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՐՑԻ ՇՈՒՋ ..... 93

*Միջազգային իրավունք*

Anahit Petrosyan

THE LEGALITY OF MUSLIM BAN AND THE PRINCIPLE OF NON-REFOUOLEMENT  
OBLIGATION UNDER PUBLIC INTERNATIONAL LAW ..... 101

*Պետության և իրավունքի տեսություն*

Արեն Տեր-Բալյան

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳԼՈՐԱԼԱՑՄԱՆ ՆԵՐԱՌՈՒՄԸ ԳԼՈՐԱԼԱՑՄԱՆ ԻՆԴԵՔՍՆԵՐՈՒՄ.  
ՏԵՍԱԿԱՆ-ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿ ..... 108

## ԱՆՉԱՓԱՀԱՍԻՆ ՎԵՐԱԳՐՎՈՂ ՀԱՆՑԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՈՒՅԹԻ ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՎԱՐՏՄԱՆ ՓՈՒԼՈՒՄ

Սամվել Դիլբանդյան

*ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի  
ամբիոնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

Նախնական քննությունը որպես մինչդատական վարույթի իականացման հիմնական ձև ունի իր սկիզբն ու ավարտը: Ի տարբերություն դատական քննության փուլի, որում օրենքով հստակեցված է նրա կառուցվածքը, և դատարանը պարտավոր է այդ ընթացակարգին համապատասխան իրականացնել քրեական գործով վարույթը, նախնական քննության փուլը չունի այդպիսի հստակ կարգավորում:

Նախնական քննության փուլի ընթացակարգի օրենսդրական ոչ հստակ կարգավորմամբ պայմանավորված՝ դատավարական գրականության մեջ հանդիպում ենք տարբեր մոտեցումների: Առավել տարածված է նախաքննության փուլի կառուցվածքի հետևյալ դասակարգումը. 1) նախաքննության սկիզբը և քննիչի կողմից քրեական գործն իր վարույթ ընդունելը, 2) քննչական գործողությունների կատարումը, 3) անձին որպես մեղադրյալ ներգրավելը և մեղադրանք առաջադրելը, 4) նախաքննության ավարտումը<sup>1</sup>: Ինչպես տեսնում ենք, նախնական քննությունը մի ամբողջական համակարգ է, որն ունի իր մասերը, որոնք փոխկապակցված են: Քրեական դատավարության փուլը բնութագրող ընդհանուր հատկանիշներից ելնելով, կարծում ենք, որ նախաքննության առանձնացված յուրաքանչյուր մաս պետք է բավարարի հետևյալ պահանջները՝ ունենա իր բովանդակությունը, դատավարական նշանակությունը, կրի պարտադիր բնույթ և ապահովի քրեական դատավարության խնդիրների իրականացումը:

Վերը թվարկված մասերից յուրաքանչյուրն ունի ուրույն նշանակություն, իսկ այդ համակարգում վճռական է նախաքննության ավարտը, որն ապահովում է դատական քննության պատշաճ իրականացումը: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 196-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Նախաքննությունն ավարտվում է մեղադրական եզրակացություն, բժշկական բնույթի հարկադրական միջոցների կիրառման համար քրեական գործը դատարան ուղարկելու մասին կամ քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշում կազմելով»<sup>2</sup>: Նախաքննության ավարտումը պետք է դիտել որպես քրեադատավարական ինստիտուտ, որը ներառում է նախաքննության ավարտման բոլոր ձևերի իրավական կարգավորումը:

Նախաքննության ավարտման հիմնական եղանակը մեղադրական եզրակացությամբ գործի քննությունն ավարտելն է: Մեղադրական եզրակացության կազ-

<sup>1</sup> Տե՛ս **Химичева Г.П.** Досудебное производство по уголовным делам: концепция совершенствования уголовно-процессуальной деятельности, М., Эказамеи, 2003, էջ 40, Курс уголовного процесса /Под ред. Л.В. Головки, М., 2017, Статут, էջ 656:

<sup>2</sup> ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի (այսուհետև՝ Նախագիծ) 185-րդ հոդվածի համաձայն՝ նախաքննությունն ավարտվում է մեղադրական եզրակացություն, եզրափակիչ ակտ կամ վարույթը կարճելու մասին որոշում կազմելով:

մամբ, նախաքննության ավարտով պայմանավորված՝ քրեադատավարական գործունեության բովանդակությունը այն դատավարական գործողություններն են, որոնք իրականացվում են օրենքով սահմանված կարգով նախաքննության ավարտին:

Քննիչը մեղադրական եզրակացություն կազմելուց հետո անմիջապես քրեական գործն ուղարկում է դատախազին, իսկ մինչև այդ քննիչը դատավարության մասնակիցներին պետք է իրազեկի նախաքննության ավարտման մասին: Մեղադրական եզրակացություն կազմելու համար հավաքված ապացույցները բավարար համարելով՝ քննիչն այդ մասին հաղորդում է մեղադրյալին, պաշտպանին, ինչպես նաև տուժողին, նրա ներկայացուցչին, քաղաքացիական հայցվորին, քաղաքացիական պատասխանողին կամ նրանց ներկայացուցիչներին և որոշում է գործի նյութերի հետ նրանց ծանոթանալու ժամանակը և տեղը (<< քր. դատ. օր-ի հոդված 265, մաս 1): Ելնելով քրեական դատավարության սույբեկտային կազմից՝ տեսնում ենք, որ դատավարության բոլոր մասնակիցները հավասարապես չեն տեղեկացվում նախաքննության ավարտման և քրեական գործի բոլոր նյութերին ծանոթանալու մասին: Ճիշտ է, քրեական դատավարության գործող օրենսգիրքը վերացրել է այն սահմանափակումը, որն առկա էր նախկին քրեական դատավարության օրենսգրքով, և որը վերաբերում էր քաղաքացիական հայցվորին և քաղաքացիական պատասխանողին, ինչպես նաև նրանց ներկայացուցիչներին: Նշված սուբեկտներն իրավունք ունենին ծանոթանալ քրեական գործի այն նյութերին, որոնք վերաբերում են քաղաքացիական հայցին: Նշված կարագավորումը տարիներ շարունակ քննադատվել է դատավարական գրականության մեջ: Չնայած օրենսդրական ընդհանրական կարգավորմանը, կարծում ենք, որ քրեական դատավարության օրենսգրքում տուժողի համար կարելի է նախատեսել սահմանափակում, մասնավորապես այն դեպքում, երբ մեղադրյալը մեղադրվում է մի քանի հանցագործությունների կատարման մեջ, իսկ տուժողին վնաս է պատճառվել այդ հանցագործություններից մեկով: Քրեական դատավարության օրենսգրքում նախատեսված սահմանափակումն այն է, որ վերը նշված հոդվածում չկա նշում օրինական ներկայացուցչի և տուժողի իրավահաջորդի մասին:

Նախաքննության ավարտման մասին դատավարության մասնակիցներին տեղեկացնելն ունի կարևոր նշանակություն, քանի որ դրա միջոցով ապահովվում է դատավարության մասնակիցների իրավունքների իրականացումը<sup>1</sup>: Քրեական դատավարությունում քննչական գործողությունների ավարտման մասին տեղեկացնելու նշանակությունը բավականին մեծ է, քանի որ դրանով՝ ա) ապահովվում է նախաքննության ավարտման ինստիտուտի առջև դրված խնդիրների իրականացումը, մասնավորապես՝ քրեական գործի նյութերին ծանոթանալու և մեղադրական եզրակացություն կազմելու, բ) ապահովվում է դատավարության մասնակիցների իրավունքների ու իրավաչափ շահերի պաշտպանությունը նախաքննության ավարտին:

Մինչև քրեական գործի նյութերին ծանոթանալը դատավարության մասնակիցները սահմանափակ քանակությամբ տեղեկություններ ունեն քրեական գործում առկա ապացույցների և դատավարական այլ փաստաթղթերի վերաբերյալ: Նախաքննության ավարտին, քրեական գործի նյութերին ծանոթանալով, դատավա-

<sup>1</sup> St' u **Кайгородова Ю.Е.** Уведомление в российском уголовном судопроизводстве: автореф. дисс. ... канд. юрид. наук. Омск, 2005, էջ 6:

րության մասնավոր անձինք հնարավորություն են ստանում ամբողջական պատկերացում կազմելու քրեական գործում եղած նյութերի մասին: Դրա միջոցով դատավարության մասնակիցները հնարավորություն են ստանում մշակելու համապատասխան մարտավարություն՝ դատարանում հանես գալու համար:

Չնայած նշված ինստիտուտի կարևորությանը՝ քրեադատավարական օրենսդրությունը մանրամասն չի կարգավորում դրա իրականացման դատավարական կարգը: Մասնավորապես, պարզ չէ, թե քննիչն ինչպես է դատավարության մասնակիցներին տեղեկացնում նախաքննության ավարտման մասին, արդյոք դրա վերաբերյալ կազմում է համապատասխան դատավարական փաստաթուղթ: Քրեադատավարական օրենսդրության իրավական կարգավորումից հետևում է, որ քննիչը նման դատավարական փաստաթուղթ չի կազմում: Սա նշանակում է, որ քրեական դատավարությունում նախաքննության ավարտման մասին տեղեկացնելու միասնական ձև չկա:

Քրեական դատավարության իրավունքի տեսության մեջ առաջ է քաշվում տեղեկացման տարբեր ձևեր: Հեղինակների մի մասը գտնում է, որ դատավարության մասնակիցներին քրեական գործի նյութերին ծանոթանալու մասին տեղեկացնելը կարող է իրականացվել ինչպես ծանուցագրով, այնպես էլ բանավոր: Այլ հեղինակներ գտնում են, որ դատավարության մասնակիցները նախաքննության ավարտման մասին պետք է տեղեկացվեն նրանց նամակ ուղարկելու միջոցով<sup>3</sup>:

Կարծում ենք, որ քրեական դատավարության օրենսգրքում նշված հարցին պետք է տալ օրենսդրական լուծում, թեև պետք է նշել, որ այս կապակցությամբ պրակտիկայում խնդիրներ չեն առաջացել: Կարծում ենք, որ նախապատվությունը պետք է տալ տեղեկացման գրավոր ձևին, որպեսզի քննիչն այդպես կարողանա հեշտությամբ ապացուցել նախաքննության ավարտման մասին դատավարության մասնակիցներին տեղեկացրած լինելու վերաբերյալ: Քանի որ պրակտիկայում կիրառվում են տեղեկացման տարբեր ձևեր, հետևաբար դատավարության ոչ բարեխիղճ մասնակիցները կարող են նաև չարաշահել ու հայտարարել, որ իրենք պատշաճ տեղեկացված չեն եղել:

Նախաքննության ավարտման մասին իրազեկված լինելու և քրեական գործի նյութերին ծանոթանալու օրենքով նախատեսված իրավակարգավորումը վերաբերում է նաև անչափահաս մեղադրյալին կամ տուժողին: Անչափահասի վերաբերյալ գործերով վարույթային առանձնահատկությունները, կարծում ենք, պետք է վերաբերեն նաև քրեական գործի նյութերին ծանոթանալուն:

Քրեական դատավարության գործող օրենսգիրքը անչափահասի կողմից քրեական գործի նյութերին ծանոթանալու առանձնահատկություններ չի նախատեսում, սակայն գտնում ենք, որ այն բարդ գործընթաց է, և դրա իրականացման պատշաճ ապահովումը կարևոր երաշխիք է քրեական դատավարությունում անչափահաս անձի իրավունքների և իրավաչափ շահերի պաշտպանության համար:

Անչափահասների վարույթի կարևոր առանձնահատկություններից է օրինական ներկայացուցչի մասնակցությունը, քանի որ քրեական դատավարությունում որպես ինքնուրույն սուբյեկտ՝ նա կոչված է ներկայացնելու և պաշտպանելու անչափահասի շահերը: Օրինական ներկայացուցիչը մասնակցում է նախաքննության բոլոր մասերում: Նախաքննության ավարտման մասի հետ կապված հարց է առաջանում. արդյո՞ք քրեական դատավարության օրենսգիրքը նախաքննության ավարտման փուլում օրինական ներկայացուցչի համար ստեղծում է բավարար երաշխիք-

ներ՝ անչափահասի իրավունքներն ու օրինական շահերը ներայացնելու համար: Քրեադատավարական օրենսդրության վերլուծությունը ցույց է տալիս, որ օրինական ներկայացուցչը նախաքննության ավարտման և քրեական գործի նյութերին ծանոթանալու մասին չի տեղեկացվում:

Նախաքննության ավարտին պաշտպանի և օրինական ներայացուցչի պարտադիր մասնակցության ապահովումը բխում է այն գործառույթից, որն իրականացնում են նշված սուբյեկտները: Իհարկե, դժվար է համաձայնել այն դատավարագետների հետ, որոնք առաջարկում են անչափահասի կողմից գործի նյութերին ծանոթանալն իրականացնել առանց օրինական ներկայացուցչի մասնակցության<sup>1</sup>:

«Հ քրեական դատավարության օրենսգրքի 77-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն՝ «Օրինական ներկայացուցիչն իրավունք ունի նախաքննության ավարտման պահից ծանոթանալ գործի բոլոր նյութերին, դրանից պատճեններ հանել և գործից դուրս գրել ցանկացած ծավալի ցանկացած տեղեկություն»: Օրինական ներկայացուցչին նշված իրավունքի վերապահումը ենթադրում է քննիչի համար պարտականության նախատեսում՝ օրինական ներկայացուցչին տեղեկացնել ինչպես նախաքննության ավարտման, այնպես էլ քրեական գործի նյութերին ծանոթանալու իրավունքի մասին: Ինչպես տեսնում ենք, քրեական դատավարության օրենսգրքի երկու հոդվածների միջև առկա է հակասություն: ՀՀ քր. դատ. օր-ի 77-րդ հոդվածից հետևում է, որ քր. դատ. օր-ի 265-րդ հոդվածում քննիչի համար պետք է սահմանվեր պարտականություն՝ տեղեկացնել օրինական ներկայացուցչին նախաքննության ավարտման, ինչպես նաև քրեական գործի նյութերին ծանոթանալու իրավունքի մասին: Հակառակ դեպքում օրինական ներկայացուցչի համար ձևական է դառնում քր. դատ. օր-ի 77-րդ հոդվածում նախատեսված քրեական գործի նյութերին ծանոթանալու իրավունքի իրականացումը:

Օրինական ներկայացուցչի կողմից գործի նյութերին ծանոթանալը երաշխիք է անչափահասի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ապահովման համար: Իհարկե, նա չի կարող փոխարինել պաշտպանին, սակայն գործի նյութերին իրազեկված լինելը նրան հնարավորություն կտա խորհրդակցել պաշտպանի հետ և խորհուրդներ տալ անչափահասին:

Քրեադատավարական գործող օրենսդրությունը որևէ սահմանափակում չի նախատեսում այն դեպքերի համար, երբ օրինական ներկայացուցչի և անչափահասի միջև կա հակասություն, կամ իր գործունեությամբ նա խոչընդոտել է հանցագործության բացահայտումը: Վարույթն իրականացնող մարմինը պետք է ձեռնարկի բոլոր միջոցները՝ կանխելու օրինական ներկայացուցչի նման գործողությունները, եթե դրանք կարող են խոչընդոտել գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությունը: Քրեադատավարական օրենսդրությունը չի նախատեսում հնարավորություն նման օրինական ներկայացուցչին վարույթից հեռացնելու. կարծում ենք, որ այն պետք է ստանա օրենսդրական կարգավորում<sup>2</sup>:

Քրեադատավարական գործող օրենսդրությունը սահմանափակում չի նախատեսում նաև այն բանի համար, երբ անչափահաս մեղադրյալի կողմից քրեական գործի որոշ նյութերին ծանոթանալը կարող է նրա վրա հոգեկան բացասական ազ-

<sup>1</sup> St`u Гукoвская Н., Кожеvникова А. Особенности прокурорского надзора за расследованием преступлений несовершеннолетних //Соц. Законность, 1968, N 5, էջ 25:

<sup>2</sup> Այս բացը լրացվել է Նախագծում. մասնավորապես նախատեսվել են դեպքեր, երբ օրինական ներկայացուցիչը կարող է հեռացվել վարույթից:



դեցություն ունենալ: Դատավարական գրականության մեջ առաջարկություն է արվում՝ նման դեպքերում քրեական գործի այդ նյութերին ծանոթանան նրա պաշտպանը և օրինական ներկայացուցիչը: Այսինքն՝ քննիչը այդ կապակցությամբ պետք է կայացնի համապատասխան պատճառաբանված որոշում, իսկ նրա պաշտպանին և օրինական ներկայացուցչին հնարավորություն տա ամբողջությամբ ծանոթանալու գործի նյութերին<sup>1</sup>:

Քանի որ օրինական ներկայացուցիչն ըստ օրենքի չի տեղեկացվում նախաքննության ավարտման ու քրեական գործի նյութերին ծանոթանալու մասին, հետևաբար անհասկանալի է, թե օրինական ներկայացուցիչը քրեական գործի նյութերին ծանոթանում է միջնորդություն ներկայացնելու ձևով, ինչպես դա սահմանված է տուժողի, քաղաքացիական հայցվորի կամ քաղաքացիական պատասխանողի կամ նրանց ներկայացուցիչների համար, թե՞ առանց միջնորդության:

Քրեական գործի նյութերին ծանոթանալուն հաջորդում է դատավարության մասնակիցների՝ միջնորդություն ներկայացնելու իրավունքը: ՀՀ քր. դատ. օր-ի 267-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Գործի նյութերին ծանոթանալուց հետո քննիչը մեղադրյալից, պաշտպանից, ինչպես նաև տուժողից, քաղաքացիական հայցվորից, քաղաքացիական պատասխանողից և նրանց ներկայացուցիչներից պարզում է, թե նրանք ունեն լրացուցիչ քննչական գործողություններ կատարելու կամ նոր դատավարական որոշումներ կայացնելու վերաբերյալ միջնորդություններ, որոնք ներկայացվում են մեկօրյա ժամկետում»: Ինչպես տեսնում ենք, նշված հոդվածում թվարկված սուբյեկտների մեջ նույնպես չի նշվում օրինական ներկայացուցչի մասին, այսինքն օրենքի տառացի մեկնաբանությունից հետևում է, որ օրինական ներկայացուցիչը իրավունք չունի միջնորդություն ներկայացնելու: Անկասկած օրենսդրական այս բացը պետք է լրացնել և դրանով լիարժեք դարձնել անչափահասի օրինական ներկայացուցչի՝ քրեական գործի նյութերին ծանոթանալու իրավունքի իրականացումը:

Անչափահաս մեղադրյալի համար շատ կարևոր է նաև այն հարցի իրավական կարգավորումը. արդյոք օրինական ներկայացուցիչը քրեական գործի նյութերին կարող է ծանոթանալ առանձին, թե՞ մեղադրյալի, տուժողի, քաղաքացիական հայցվորի, քաղաքացիական պատասխանողի հետ միասին: Այս հարցը կարգավորված է ՀՀ քր. դատ. օր-ի 266-րդ հոդվածի 3-րդ մասով, որի համաձայն՝ «Մեղադրյալը և պաշտպանը գործին ծանոթանում են դատավարության մյուս մասնակիցներից ավելի ուշ: Նրանք իրավունք ունեն գործին ծանոթանալ միասին կամ առանձին: Նմանապես՝ ներկայացուցիչների հետ միասին կամ առանձին գործին կարող են ծանոթանալ նաև տուժողը, քաղաքացիական հայցվորը, քաղաքացիական պատասխանողը»: Նշված հոդվածում կարգավորված չէ նաև այն հարցը, թե արդյոք օրինական ներկայացուցիչը քրեական գործի նյութերին ծանոթանում է առանձին, թե անչափահասի հետ միասին:

Անկասկած արդարացված չէ անչափահաս մեղադրյալին կամ տուժողին գործի նյութերը ծանոթանալու համար առանձին ներկայացնելը, քանի որ քրեական դատավարության օրենսգրքի կարգավորումից հակառակը չի հետևում: Իհարկե անչափահասների գործերով պաշտպանի մասնակցությունը քրեական գործով վա-

<sup>1</sup> Տե՛ս **Кокурин И.П.** Проблемы прокурорского надзора за деятельностью органов предварительного следствия по делам о несовершеннолетних // Вестник МГУ, 1995, էջ 79:

րույթին պարտադիր է, և դրանից կարելի է ենթադրել, որ անչափահաս մեղադրյալը հնարավորություն ունի քրեական գործի նյութերին ծանոթանալ պաշտպանի հետ միասին: Քննիչի կողմից անչափահաս մեղադրյալին քրեական գործի նյութերը ծանոթանալու համար առաձին ներկայացնելը արդարացված չէ և չի բխում նրա իրավաչափ շահերից: Կարծում ենք, որ իր տարիքային առանձնահատկություններից ելնելով, անչափահասը, քրեական գործի նյութերին պետք է ծանոթանա պաշտպանի և օրինական ներկայացուցչի հետ միասին:

Քննիչը նախաքննությունն ավարտելուց հետո կազմում է մեղադրական եզրակացություն, որը ներառում է ինչպես քննիչի, այնպես էլ դատախազի դատավարական գործողությունները: Նշված սուբյեկտների գործունեությունը միմյանց հաջորդող դատավարական գործողությունների համակցություն է, որոնք հնարավորություն են տալիս լուծելու դատավարական այս փուլի առջև դրված խնդիրները: Պետք է նշել, որ ինչպես քննիչի, այնպես էլ դատախազի կողմից դատավարական գործողությունների կատարումը կապված է դատավարական որոշման կայացման հետ և պահանջում է դրա պատշաճ ձևակերպում: Մեղադրական եզրակացությամբ նախաքննությունն ավարտելու դատավարական գործունեության հիմքը բավարար ապացույցների առկայությունն է, քրեական գործով բոլոր անհրաժեշտ քննչական գործողությունների կատարումը, քննիչի կողմից այդ հանագամանքների ճանաչումը, ինչպես նաև դատախազի կողմից դրա օրինականության և հիմնավորվածության ստուգումը:

Հստակեցնելով մեղադրական եզրակացության նշանակությունը՝ կարելի պնդել, որ դա բազմանշանակ փաստաթուղթ է: ՀՀ Սահմանադրական դատարանի թիվ ՍՂՈ-934 որոշման համաձայն՝ «Մեղադրական եզրակացությունը ոչ միայն դատավարական փաստաթուղթ է, որով ամփոփվում են նախաքննության տվյալները, ներկայացվում են անձին մեղսագրվող արարքի իրավաբանական որակումը և այն հիմնավորող ապացույցները, այլև հնարավորություն է ընձեռվում ամբաստանյալին կազմակերպելու և իրականացնելու առաջադրված մեղադրանքից պաշտպանվելու իրավունքը՝ կոնկրետ մեղադրանքի և այն հիմնավորող ապացույցների շրջանակներում: Մեղադրական եզրակացությունը իրավական հնարավորություն է ստեղծում նաև գործով շահագրգիռ այլ անձանց՝ ապահովելու իրենց խախտված իրավունքների պաշտպանությունը»<sup>1</sup>:

Հարկավոր է զերծ մնալ քննչական պրակտիկայում հանդիպող այն ոչ ճիշտ հնարքից, երբ քննիչը մի շարք դեպքեր ու փաստեր շարադրում է առանց յուրաքանչյուրի վերաբերյալ ապացույց ներկայացնելու, իսկ հետո բոլոր այդ դեպքերի վերաբերյալ անմիջապես բերում է դրանց առնչվող ապացույցներ: Պետք է նշել, որ ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքում ապացույցներ ներկայացնելն օրենսդրական ուղղակի պահանջ է: Այսպես, ՀՀ քր. դատ. օր-ի 270-րդ հոդվածի համաձայն՝ մեղադրական եզրակացության նկարագրական-պատճառաբանական մասում քննիչը շարադրում է հանցագործության հանգամանքները, մեղադրյալին, ինչպես նաև տուժողին բնութագրող հանգամանքները, մեղադրյալի մեղավորությունը:

<sup>1</sup> ՀՀ Գլխավոր դատախազի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309.1 հոդվածի 3-րդ մասի ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը, 2011թ. փետրվարի 4-ի ՍՂՈ-934:

նը հաստատող ապացույցները, ի պաշտպանություն նրա բերվող փաստարկները և այդ փաստարկների ստուգմամբ հավաքված ապացույցները<sup>1</sup>:

Ս. Պ. Եֆիմիչևը և Պ. Ս. Եֆիմիչևը, ելնելով այն բանից, որ ամբողջ քրեական դատավարությունն իրականացվում է այն նպատակով, որ քրեական դատավարությունը վարող անձանց գիտակցության մեջ հավաքված ապացույցների վրա ձևավորվի կատարվածի, իրականության վերաբերյալ ճիշտ և օբյեկտիվ արտացոլումը, հետևյալ եզրակացությունն են անում. «Օրենքի՝ մեղադրական եզրակացության մեջ մեղադրանքը հաստատող ապացույցների ցանկը և այն ապացույցների ցանկը, որոնց հղում է անում պաշտպանության կողմը, շարադրելու ցուցումը պետք է դիտել որպես օրենսդիրի հանձնարարական՝ ոչ միայն նշելու դրանց աղբյուրները՝ հղելով գործի հատորների ու թերթերի համարները, այլև բացելու դրանց բովանդակությունը և տալու համապատասխան վերլուծություն»<sup>2</sup>:

Ապացույցների վերլուծության մեջ ամենակարևորը, ինչպես նշվում է գրականության մեջ, ոչ թե դրանք պարզապես բերելն է, թվարկելը, այլ դրանցից յուրաքանչյուրի նշանակությունը բացատրելը, մի քանի ապացույցների համակցությունից եզրակացություններ բխեցնելը, դրանք հաջորդաբար կառուցելը՝ նախորդող կամ հաջորդող թեզերի առումով<sup>3</sup>: Այս տեսանկյունից կարծում ենք, որ օրենսգրքում պետք է նախատեսել նաև ապացույցը վերլուծելու պահանջը:

Անչափահասին վերագրվող հանցանքի վերաբերյալ վարույթի առանձնահատկությունները վերաբերում են նաև մեղադրական եզրակացություն կազմելուն, որում պետք է արտացոլվեն ապացուցման առարկան կազմող այն հանգամանքները, որոնք օրենքն առանձնացնում է:

Անչափահասների գործերով ապացուցման առարկա ասելով՝ հասկանում են այն հանգամանքները, որոնք ենթակա են հաստատման նշված կատեգորիայի մեղադրյալների սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները հաշվի առնելով և անհարաժեշտ են քրեական գործի ճիշտ լուծման և քրեական դատավարության խնդիրների իրականացման համար: Վարույթի այս տեսակի առանձնահատկությունները պայմանավորված են անչափահաս անձի ֆիզիկական և սոցիալ-հոգեբանական հատկանիշներով, ինչպես նաև անձի տարիքային զարգացվածությամբ պայմանավորված հանգամանքներով:

<sup>1</sup> Այս խնդիրը քննարկաման առարկա դրածավ նաև պրակտիկայում, մասնավորապես՝ Երևան քաղաքի Շենգավիթի վարչական շրջանի դատարանը 15.12.2016թ. թիվ 11811616 քրեական գործով որոշում կայացրեց քրեական գործը մեղադրական եզրակացությամբ մեղադրողին վերադարձնելու մասին, որում նշված էր, որ «մեղադրական եզրակացությունը կազմելիս քննիչը բավարարվել է միայն ապացույցների թվարկմամբ ու չի բացահայտել դրանց բովանդակությունը: Մեղադրական եզրակացությունից պարզ չէ, թե փորձաքննության արդյունքում պարզված որ տվյալներն են հաստատում մեղադրյալների մեղավորությունը նրանց մեղսագրվող հանգամանքներում»: Դա վկայում է այն մասին, որ դատարանի համար մեղադրական եզրակացության մեջ տեղ գտած ապացույցների պարզումն ունի կարևոր նշանակություն: Օրենսդրական հստակ կարգավորման բացակայությունը նաև պատճառ դարձավ՝ սույն գործով ՀՀ Քլխավոր դատախազի կողմից ՀՀ Սահմանադրական դատարան դիմելու:

<sup>2</sup> Տե՛ս **С.П. Ефимичев, П.С. Ефимичев.** Обвинительное заключение, его содержание и структура // Российский следователь. 2005. № 12, էջ 14.

<sup>3</sup> Տե՛ս **Статкус В.Ф., Цоколов И.А., Жидких А.А.** Предъявление обвинения и составление обвинительного заключения. М., 2002, էջ 97:

Անչափահասին վերագրվող հանցանքի վերաբերյալ ապացուցման առարկան այն հանգամանքներն են, որոնք ենթակա են պարզման և անհրաժեշտ են յուվենալ արդարադատության խնդիրների իրականացման համար: Քրեադատավարական օրենսդրությամբ՝ ապացուցման ենթակա ընդհանուր հանգամանքներից բացի («Քր. դատ. օր-ի հոդված 107»), սահմանված են նաև հանգամանքներ, որոնք ապացուցվում են միայն անչափահասների գործերով («Քր. դատ. օր-ի հոդված 440»):

Ապացուցման ենթակա հանգամանքները կազմում են անչափահասների գործերով վարույթի հիմնական առանձնահատկություններից մեկը: Քրեական գործի քննության ընթացքում վարույթն իրականացնող մարմինը, բոլոր գործերով հաստատման ենթակա հանգամանքներից բացի, անչափահասների գործերով պարզում է նաև անչափահասի<sup>ա</sup>

1) տարիքը (ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը),

2) կյանքի և դաստիարակության պայմանները,

3) առողջության և ընդհանուր զարգացման վիճակը («Քր. դատ. օր-ի 440 հոդված»):

Ինչպես տեսնում ենք, օրենսդիրը, բոլոր գործերով հաստատման ենթակա հանգամանքներից բացի, անչափահասների գործերով առանձնացնում է այնպիսի հանգամանքներ, որոնք բնութագրում են անչափահաս անձի սոցիալ-հոգեբանական վիճակը: Նշված հանգամանքների առանձնացումը նպատակ է հետապնդում ապահովել յուվենալ արդարադատության խնդիրների իրականացումը: Յուվենալ արդարադատության խնդիրներից ելնելով՝ կարծում ենք, որ քրեադատավարական գործող օրենսդրությունը առանձնացնում է անչափահասների գործերով ապացուցման ենթակա հանգամանքների սահմանափակ շրջանակ: Այս առումով գործող քրեադատավարական օրենսդրությունը չի բովանդակում այն կարագվորումը, որը տեղ է գտել Պեկինյան կանոններում, իսկ մինչդեռ նշված կանոնների 1.4 հոդվածի համաձայն՝ անչափահասների նկատմամբ արդարադատությունը պետք է յուրաքանչյուր երկրի ազգային զարգացման ընթացքի հիմնական բաղադրիչ մասը հանդիսանա՝ բոլոր անչափահասների համար սոցիալական արդարությունը բազմակողմանիորեն ապահովելու շրջանակներում, այդպիսով միաժամանակ օժանդակելով երիտասարդության պաշտպանությանը և հասարակության մեջ ապահովելով խաղաղ կարգ ու կանոն:

Նախագծում ապացուցման ենթակա հանգամանքների շրջանակը ընդարձակվել է, և տեղ են գտել այնպիսի հանգամանքներ, որոնք բնութագրում են անչափահաս մեղադրյալի անձի բնութագրական գծերը: Դրանք կարևոր են պատասխանատվության անհատականացման, պատժի նշանակման և դաստիարակության միջոցների ընտրության համար: Ինչպես նշված է դատավարական գրականության մեջ, այդ հանգամանքները պայմանավորում են անչափահասների գործերով ապացուցման առարկայի առանձնահատկությունները<sup>1</sup>:

Քրեական դատավարության օրենսգրքում այդ հանգամանքների առանձնացումը նշանակում է, որ քննիչը անչափահասին վերագրվող հանցանքի վարույթում մեղադրական եզրակացություն կազմելիս հատուկ ուշադրություն պետք է դարձնի այդ հանգամանքների և դրանց ապացուցվածության վրա: Անչափահասի անձը

<sup>1</sup> St' u Уголовно-процессуальное право Российской Федерации. //Под. ред. П.А. Лупинской. М., Юность, 2003. էջ 668:

բնութագրող հանգամանքները հաստատող ապացույցները մեղադրական եզրակացությունում պետք է վերլուծված ներկայացվեն: Մեղադրական եզրակացությունում անչափահասի անձը բնութագրող հանգամանքների պարզաբանման բացակայությունը վկայում է քրեական գործի թերի կամ ոչ լրիվ քննության մասին: Նման վիճակը հետագայում բավականին դժվարություն կարող է առաջացնել դատարանի համար, քանի որ դրանք անհրաժեշտ են մեղադրյալի նկատմամբ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու հարցը լուծելու համար: Մեղադրական եզրակացության մեջ անչափահաս մեղադրյալի անձի բնութագրումը դատարանին հնարավորություն է տալիս ամբողջական պատկերացում կազմելու անձի մասին և նշանակել արդարացի պատիժ:

Անփոփելով վերը նշվածը՝ գտնում ենք, որ պետք է վերացնել օրենսդրական այն բացերը, որոնք խոչընդոտում են անչափահասի լավագույն շահի արդյունավետ պաշտպանությունը:

## THE FEATURES OF THE JUVENILE PROCEEDINGS IN THE FINAL STAGE OF PRETRIAL PROCEEDINGS

**Samvel Dilbandyan**

*Head of the YSU Chair of Criminal Procedure and Criminalistics,  
Doctor of Legal Sciences, Professor*

---

The article discusses the features of the juvenile proceedings in the final stage of pretrial proceedings. The author, particularly, refers to the completion of pretrial proceedings by indictment and stresses the shortcomings existing in legislation and practice.

These issues concern the participation of a legal representative. In particular, legislative shortcomings cannot provide the effective insurance of the rights and legal interests of the juvenile.

## ОСОБЕННОСТИ УГОЛОВНОГО СУДОПРОИЗВОДСТВА ПО ДЕЛАМ НЕСОВЕРШЕННОЛЕТНИХ НА СТАДИИ ОКОНЧАНИЯ ПРЕДВАРИТЕЛЬНОГО СЛЕДСТВИЯ

**Самвел Дилбандян**

*Заведующий кафедрой уголовного процесса и криминалистики ЕГУ,  
доктор юридических наук, профессор*

---

В статье анализируются особенности уголовного судопроизводства по делам несовершеннолетних на стадии окончания предварительного следствия. В частности, автор затронул вопрос окончания предварительного следствия с составлением обвинительного заключения и выделил проблемы, существующие в законодательстве и в практике. Эти вопросы касаются участия законного представителя на стадии окончания предварительного следствия, в частности, отсутствие четкого законодательного регулирования не может обеспечить эффективную защиту прав и законных интересов несовершеннолетних.

**Բանալի բառեր** - քրեական վարույթ, անչափահաս, օրինական ներկայացուցիչ, վարույթի արանձախատվություններ, ապացույցներ

**Ключевые слова** - уголовное судопроизводство, несовершеннолетний, законный представитель, особенности судопроизводства, доказательства

**Key words** - criminal proceedings, juvenile, legal representative, features of proceedings, evidence